


Ա. ԳՅՈՒԼԱՆՅԱՆ

ԻՆԶՊԵՍՊԱՅՔԱՐԵԼ
ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ
ԳԱՐՆԱՆԸ, ՍՄՌԱՆ ՍԿԶԲԻՆ

ש 176

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

Ա. ԳՅՈՒՂԱՆՅԱՆ



b32.5

9

A 4056

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ
ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

ԳԱՐՆԱՆԸ ՅԵՎ ԱՄՌԱՆ ՍԿԶԲԻՆ



Նայված յեմ խմբագրված և Գյուլ-իմասի-
ուուտի ընդե. յերկր. ամբիոնի կազմից

Պատ. խմբագիր՝ Ս. Կիրակոսյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Հակոբյան

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնված և արատադրության 1934 թ. ապրիլի 4-ին, ստորագրված

և տպագրության 1934 թ. ապրիլի 13-ին

Թույլատրված և գլավիտիցի-Պատվեր № 275, Տիրած 3500

ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂ. 50

ԱՆԻՆԱ ՊԱՅՔԱՐԵԼՈՎ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ,
ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2-րդ հնդամյակի ընթացքում գյուղատնտեսու-
թյան բոլոր նյութերի (յերկրագործություն, անասնա-
պահություն) բերքատվության բարձրացումը կեն-
տրոնական խնդիրներից մեկն է:

Յերկրագործության բոլոր կուլտուրաների բեր-
քատվությունն աբազորեն բարձրացնելու գործում
ազրոտեխնիկական ձևաարկումների մեջ մուլախոտերի
դեմ տարվող անխնա պայքարն ունի մեծահասուն նշա-
նակություն

Մեր խորհրդային և կելեկտիվ տնտեսություն-
ներին, աշխատավոր մենատնտեսություններին, հե-
տևապես և ամբողջ ժողովրդական տնտեսությանը,
մուլախոտերի հասցրած վնասները, թե՛ քանակական և
թե՛ մորակազմի տեսակետից հսկայական չափերի յեն
հասնում: Ամեն տարի մեր դարնանացան հացահա-
տիկների (դարի, ցորեն և այլն) բերքը խիստ կերպով
պակասում է, շնորհիվ հողամասերի մուլախոտերով անչափ
վարակլած լինելուն: Իսկ յեթե վերցնենք ԽՍՀՄ-ում
ամբողջ աշնանացան ու դարնանացան հացահատիկ-
ները, ապա մուլախոտերի պատճառով նրանց բերքի
ընդհանուր կորուստը կազմում է պատկառելի մի թիվ:
Իսկ յեթե այս բոլորին ավելացնենք նաև այն ահագին
չափերի հասնող կորուստները, վորոնք տեղի յեն ու-
նենում ամեն տարի բամբակի, շաքարի ճակնդեղ,

բանջարանոցային բույսերի և այլ կուլտուրաների բերքից՝ մուլախոտերի և ֆլասատոււնների զարգացման և բազմացման հետեանքով (չպետք է մոռանալ այն, վոր մուլախոտերը միաժամանակ ֆլասատոււնների տարածման ոջախներ են), ապա պատկերն ամբողջապես պարզ կլինի:

Մուլախոտերը, վորոնք անչափ տարածված են մեր դաշտային, նախալեռնային և լեռնային շրջաններում, նկատի առնելով նրանց բազմացման և տարածման առանձնահատկությունները, կարելի յն բաժանել յերկու մեծ խմբերի՝

1. Գարնանային և աշնանային միամյա մուլախոտեր, վորոնք բազմանում են միմիայն սերմերով (խրոփուկ, թելուկ և այլն). սրանց սերմերը մեծ մասամբ ծլում են դարնանը, մասամբ աշնանը, զարդանում են գարնան և ամռան ամիսներին, և մինչև աշնան ամիսները հասունանում են, տալիս են սերմ և իրենք էլ մեռնում են: Պատահում են դեպքեր, յերբ սրանցից վորոշ մուլախոտեր, յեթե մինչև աշունը սերմեր չեն տվել, չեն մեռնում, ձմեռում են (յեթե մանավանդ ձմեռը մեղմ է լինում), հաջորդ գարնանը շարունակում են իրենց զարգացումը, հասունանում, ահադինքնանակությամբ սերմ են տալիս և թափում այն հողի մեջ ու բանում:

Ուրեմն սրանք ապրում են 1—2 տարի և հենց վոր սերմ տվին, իրենք անխուսափելիորեն մեռնում են: Այս խմբի դեմ տարվող պայքարի եյությունը հետեյալն է՝ նախ չը թողնել, վոր նրանք սերմեր տան, իսկ յեթե հողը վարակված է սրանց սերմերով, ապա

պետք և այնպես անել, վոր նրանք ծլին, վորից հետո հեշտ և վոհնչացնել նրանց:

2. Բազմամյա մուլխոտեր, վորոնք վոհ միայն սերմերով են բազմանում ու տարածվում և խիստ վարակում հողամասերը, այլև բազմանում են իրենց ստորերկրյա (հողի տակ) որդաններով (չայերը, կանգատը, բազմամյա պատատուկները և այլն): Մրանց դեմ պայքարելու համար սխտեմատիկաբար նրանց պետք և վոհնչացնել:

Ահա այդ յնրեկու խմբի մուլխոտերն ամեն տարի բազմանում և դաշտերը վարակում են հսկայական չափերի հասնող սերմերով ու իրենց վիզետատիվ որդաններով: Մեր հողերում տարածված բազմապիսի մուլխոտերը մեծ ֆուսս են հասցնում դյուրատեսուությանը, խլելով հողից ջուր, սննդանյութեր, զրկելով կուլտուրական բույսերին ողից ու լույսից և այլն: Այսպես, որինակ՝ հետադատությունները ցույց են տվել, վոր մեր հացահատիկների ցանքերում խիստ տարածված խոփուկը 1,5 անգամ ավելի շատ ջուր և վերցնում հողից, քան ցորենը: Նման տվյալներ կարելի և բերել նաև բազմաթիվ այլ, շատ տարածված մուլխոտերի վերաբերմամբ:

Մակայն դա դեռ բավական չե, մուլխոտերը վերցնում են հողից ահագին քանակությամբ այնպիսի սննդանյութեր, վորոնք խիստ անհրաժեշտ են մեր կուլտուրական բույսերի սննդատության, փարթամ-դարդացման, հետևապես և առատ բերքատության համար, ինչպես որինակ, ազոտ, ֆոսֆոր և կալիում: Նորադույն հետադատություններից բերենք մի քանի թվեր, վորոնք կարող են ցույց տալ, թե մի հեկտար

Բից ինչքան կիլոգրամ հիմնական սննդանյութեր են վերցնում—մի կողմից մուլախոտերը, մյուս կողմից ցորենը: Ահա թվերը՝

		Ազոտ	Փոսֆոր	Կալցիում
1.	Կանգառ (Cirsium arvense)	133,13	31,04	116,98
2.	» (Sonchus arvensis)	67,00	28,75	159,77
3.	Չայիբ (Agropyrum)	48,58	31,48	68,53
4.	Ցորեն { 16 ցենտներ հատիկ և 24 ցենտ. դարման տալու դեպքում	45,8	21,6	28,1

Բերած թվերը ցույց են տալիս, վոր այս յերեք բաղաձայնյալ մուլախոտերը, վորոնք բավականաչափ տարածված են մեզ մոտ, նշված յերեք հիմնական սննդանյութերից 1,5—3 և ավելի անգամ շատ են վերցնում, քան ցորենը: Մուլախոտերից մի քանիսը փաթաթվելով բույսերին, մասնավորապես հացահատիկներին, վերջիններին պառկելու պատճառ են դառնում (պատատու կը): Բաղաձայնյալ մուլախոտեր կան, վորոնք խիստ դժվարացնում են հողի միխանիկական մշակութունը (չայիբ), կոմբայնի և կալսիչի անխափան աշխատանքը (հյութալի և հաստ ցողուն ունեցող մուլախոտերը, որինակ կանդաղը) և այլն, և այլն: Այս բոլորի հետևանքով կուլտուրական բույսերի նորմալ դարդացումն

արդիւակիւում և շատ հաճախ յերկրագործական աշխատանքներէ արտադրողականութեան ընկնում ևս

Սակայն բնավ չի կարելի պնդել, Վոր մենք գործադրել ենք սոց. յերկրագործութեան բոլոր հնարավորութեանները մտախոտերը վաճնչացնելու ուղղութեամբ: Այլ անսակեալից մենք գեո շատ անելիքներ ունենք, Վորոնց պետք է անցնենք հենց այս դարնանից:

1. ՍԵՐՄԱՋՏՈՒՄԸ

Ինչ ձևոսն ամիսներին պետք է ամբողջ սերմացուն դաել և անսակավորել: Սակայն յեթե այս կամ այն շրջանում և կոլիտողում դեռ կա չլստված սերմացու, ապա հրատապ կերպով պետք է այն գտել: Կատալութեան հրահանգով թույլատրվում է ցանել այն սերմացուն, Վորի թէ մաքրութեանը և թէ ձլունակութեանը 90% -ից պակաս չէ: Բացառութեաններ թույլատրվում են կենսորոնական որգանների կարգադրութեամբ միայն:

Սերմացվի գտումն այն հիմնական միջոցներից մեկն է, Վորով պայքարում ենք մտախոտերի տարածման դեմ: Սերմացուն անպայման պետք է մաքրել մտախոտերից և իներտ ելեմենտներից (քար, հող, ծղնոտ, չմշակված սննմեր և այլն), Վորով բարձրանում է սերմացվի մաքրութեան 0% -ը և կանխվում սերմացվի հետ մտախոտերի սերմերի տարածումը: Առանց այդ էլ հողը վարակված է մտախոտերի հարյուրավոր միլիոն սերմերով: Առանց գտելու և վոչ մի հատիկ սերմացու չպետք է ցանվի սոցիալիստական դաշտերում: Այդ հարցը դրվում է մեր բոլոր շրջանների կոլ-

խողներն առաջ, վորոնց սերմացուն խիստ չափով վարակված է բազմապիսի մոլախոտերով:

2. ՊԱՅՔԱՐԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՍ ՄԻՆՁԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ

Գարնանացաններին հասկացված հողամասերի մոլախոտերի վոչնչացումը՝ ժամանակին դորձադրվելիք միջոցների տեսակետից, պետք է բաժանել յերկու շրջանների, այն է՝ մինչցանքային և հետցանքային շրջանների: Մինչցանքային շրջանում, այսինքն մարտ և ապրիլ ամիսներին, յեթե հողամասը չի վարվել աշնանից, ապա չպետք է կորցնել վոչ մի որ՝ հողամասի ու ցանվող կուլտուրայի առանձնահատկութունները հաշվի առնելով, առաջին խել հնարավորության պահին, հողամասը վարել մոտավորապես 15—18 սմ. խորությամբ: Սակայն այդ խորությունը տարբեր շրջաններում և տարբեր հողերում պիտի փոխել և կոնկրետացնել: Այս ուղերացիայի դեպքում գարնանը, ձմեռն անցկացրած աշնանային և նոր ծլած գարնանային միամյա մոլախոտերը, ինչպես և բազմամյա մոլախոտերի դեռ նոր-նոր գարգացող արմատները, շուտ գալով հողի շերտի տակը և գրկվելով լույսից, գրեթե անբողջովին վոչնչանում են: Դրանից բացի, դեռ նախորդ տարիներից գարգացումն սկսած բազմամյա մոլախոտերը ևս գարնան վարի ժամանակ զգալի չափով վոչնչանում են, ֆիզիքական մնասնեք ստանում, արմատահան արվում կամ թե արմատական սխտեմը գրկվում և իր վերերկրյա որդաններից, այն է՝ ցողուններից և տերևներից, վորոնց միջոցով նա ստանում էր իր սնունդը: Այդ պայմաններում և տ

գործադրում է իր մեջ կուտակված նյութերը նոր-տե-
րւններ և ցողուններ տալու համար, մի հանգամանք,
վորն առաջ է բերում արմատական սիւստեմի հյուժու
ու այդ վնասակար խմբի մոլախոտերի ընդհանուր
թուլացում:

Կարնան վարից անմիջապէս հետո պետք է հո-
ղամասը փոցխել, գործադրելով տարբեր տիպի փոց-
խեր՝ նայած հողամասի առանձնահատկությանը և
մոլախոտերի բնույթին: Այսպէս որինակ՝ դիզզազով
փոցխել, յետեւ հողամասը դանդուրդանոտ կամ չայի-
րոտ է: Ապա դուրս բերված մոլախոտերը անպայմա-
նորեն պիտի հավաքել ու հեռացնել դաշտից: Զսպա-
նակավոր փոցխով պիտի փոցխել քարքարոտ հողամա-
սերը, վորը վորոշ չափով վարված հողերից դուրս է
հանում և հավաքում մոլախոտերը: Այդ աշխատանքը
չպետք է ուշացնել, այլապէս հողի վարի հետևանքով
դոյացած մեծ մակերեսը շատ ջուր կը գոլորշիացնի
և դրանից հետո փոցխելը չի հասնի իր առաջ դրված
սզրոտխնիքական հարցերի իրականացմանը, այն է՝
հողերի մակերեսը փոքրացնել, խորթութութութություն-
ները վերացնել, արմատահանված բազմամյա մոլախո-
տերը հողից դուրս բերել և այլն:

Ցանքից մեկ-յերկու օր առաջ կատարվող կուլ-
տիվացիան կամ 1—2 հետքով կատարվող փոցխումը
վոչնչացնելու յետ այդ բոլոր մոլախոտերի նոր ծիւերի
մեծագույն մասը:

Ինչ վերաբերում է դարնանացանների համար աշնանից վարված և չփոցիված հողամասերի վրա յեղած մոլախոտերի վոչնչացմանը մինչև ցանք կատարելը, ապա այստեղ առաջին հիմնական ու հրատապ աշխատանքն այդ հողամասերի փոցխելը կամ կրկնավարելն է (նայած հողին, նրա վարակվածության և այլն) դաշտ դուրս գնալու հնարավորության առաջին իսկ պահին: Այս դեպքում կտրատվում են, հողի տակով են արվում ու վոչնչանում աշնանային և դարնանային միամյա, ինչպես և բազմամյա մոլախոտերի մատղաղ ծիւերը: Կրկնավարին հաջորդող փոցխը արմատահան արված բազմամյա հին մոլախոտերի տակոփկները և արմատական սխտեմը դուրս է բերում հողի տակից, հավաքում է նրանց իր ատամներով, վորոնց արդեն կարելի չէ հեռացնել դաշտից:

3. ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՎՃՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՑՈՒՆԸ

Մոլախոտերի դեմ պայքարելու կարևոր մոմենտներից մեկն էլ ցանք կատարելու ժամանակն է: Ուշ կատարված դարնանացանը դարգանում է շատ դանդաղ, իսկ բազմաթիվ և բազմապիսի մոլախոտերը արագ և փարթամորեն զարգանալով, սկսում են խեղդել կուլտուրական բույսերին, մի բան, վոր հաճախ պատահում է մեր թե՛ դաշտային (բամբակացան) և թե՛ նախալեռնային ու լեռնային (հացահատիկային և անասնապահական) շրջաններում:

Իրան հակառակ, յերբ ցանքը ժամանակին է

կատարվում, մեր թե տեխնիկական կուլտուրաները և թե մանավանդ հացահատիկները, ոգտագործելով գարնան սկզբի շրջանի առատ խոնավությունն ու այլ նպաստավոր պայմանները, զարգանում են արագ տեմպով, թփակալում ու ծածկում հողամասը, իրենց շվաքի տակն առնում մոլախոտերը և հետևապես խեղդում նրանց: Հացահատիկների գերվաղ ցանք կատարելուն կատառուճներից մեկն էլ մոլախոտերին խեղդելու խնդիրն է: Իսկ ցանքի ճիշտ ժամանակի ընտրության հարցն այնքան էլ հեշտ հարց չէ: Տարբեր տարիներում ավյալ շրջանում, ավյալ կուլտուրայի ցանքի մոմենտը յենթարկվում է վարոշ տատանումների և ամբողջ խնդիրն էլ հենց այն է, վոր այդ բարդության մեջ դանկնք այդ մոմենտը:

Աշնանացանի ուշ կատարելն ևս ունենում է միևնույն բացասական հետևանքները; վորովհետև ուշ ցանվող աշնանացանը՝ վրա հասած աշնան ցրտերի շնորհիվ, չի կարողանում լավ զարգանալ և թփակալել, հետևապես մնում է վտիտ, մինչդեռ ահագին քանուկությամբ աշնանային միամյա մոլախոտերը դեռ աշնանից բավական զարգացած լինելով, անհամեմատ ավելի քիչ վնասվելով ձմռան սառնամանիքներից, վաղ դարձանից էլ սկսում են շարունակել իրենց վեգետացիան և ճնշել կուլտուրական բույսերին:

Այս մասում անհրաժեշտ է նաև մի քանի խոսքով ասել ցանք կատարելու յեղանակի, նրա խորության և սորտի մասին: Սոց. յերկրագործության մեջ շաղացանը բոլոր ասպարեզներից էլ պետք է դուրս մղել (կիրառել իբրև բացառություն՝ առանձին, խիստ քարքարոտ հողակտորների վրա) և փոխարինել շաբա-

ցանով, վորովհետև կանոնավոր կատարված շարքացանը վոչ միայն խնայում է սերմացուն, այլև համաչափ և մտավորապես միատեսակ խորության մեջ է դասավորում սերմացուն հողի մեջ: Իրա հետևանքով սերմերը ծլում են միաժամանակ, վորով բույսերի միահմուռ դարգանալու հնարավորությունն է ստեղծվում, մի հանգամանք, վորը կործանարար ազդեցությունն է գործում մոլախոտերի վրա:

Ուժեղ վարակված հողամասերում համեմատաբար խիտ ցանք պիտի անել: Մեծ նշանակություն ունի նաև լավորակ սերմացու ցանելը: Այսպես, որինակ՝ պետք է ցանել արագ և փարթամ դարգացող հացահատիկների տեսակները, յեթե, ի հարկե, նրանց բերքը վորակի տեսակետից հետ չի մնում, և դա մեծ չափով կնպաստի մոլախոտերի խեղդման:

4. ԳԱՐՆԱՆԸ ՄՈՒԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ՇԵՑ ՑԱՆՔՅԱ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչ վերաբերում է այս շրջանում մոլախոտերի դեմ տարվող պայքարի միջոցներին և նրանց դործադրման յեղանակներին ու ժամկետներին, առաջ անհրաժեշտ է ընդգծել, վոր դրանք տշնանացանի և դարնանացան դանազան կուլտուրաներում տարածված մոլախոտերի նկատմամբ պետք է տարբեր լինի, մանավանդ վաղ դարնան ամիսներին և ահա թե ինչու:

Աօնամտցունների մեջ դեռ աշնանից ծլած կամ վեգետատիվ որդաններ տված ու ձմեռած բազմամյա և աշնանային միամյա մոլախոտերը մի կողմից, դարնանային բազմաթիվ և բազմատեսակ միամյա մոլախոտերը մյուս կողմից, հենց վաղ դարնանից արագ

կերպով զարգանալ են սկսում, հետևապես հենց այդ վաղ շրջանում է, վոր նրանց վոչնչացնելու վորոշ միջոցներ պետք և գործադրել, այլապես նրանք կարող են իրենց ուժգին ստորերկրյա և վերերկրյա որգանների փարթամ զարգացման շնորհիվ խեղդել աշնանացաններին, մտնավանդ յեթե աշնանացանը ժամանակին ցանված չի յեղել և հետևապես աշնանը, չի կարողացել ամրացնել իր արմատական սխտեմը, լավ թիփակալել: Այդ տեսակետից բավականաչափ հուսալի ագրոտեխնիկական միջոց է՝ աշնանացանների վաղ գարնան 1—2 հետք փոցխումը «դիզ-զազ» փոցխով, յերբ մոլախոտերն սկսում են զարգանալ և հասնել մի քանի սանտիմետր յերկարության:

Փոցխն իր արմատներով ու շրջանակներով կըտրատում, տրոբում է կամ սրմատահան է անում մատաղ մոլախոտերը կամ զանազան Ֆիզիկական վնասներ է հասցնում նրանց և հետևապես զգալի չափով թուլացնում նրանց զարգացումը:

Վերոհիշյալներից զատ, փոցխը բավականաչափ նատած և պնդացած հողի մակերեսը փխրեցնում է և կանխում է նրա կեղևակալումն ու հողում պաշարված ջրի անտեղի գոլորշիացումը:

Ի հարկե, ներկա դեպքում փոցխը կարող է կտրատել և վոչնչացնել աշնանացանի վորոշ ներկայացուցիչներին ևս, սակայն դրանից չափտք է վախենալ, վորովհետև աշնանացանը նորից վերականգնում է իր վնասված մասերը: Դարնանացան հացահատիկների մեջ յեղած մոլախոտերը վոչնչացնելու համար փոցխել այն ժամանակ, յերբ բույսն ունի յերեք տերև: Փոցխելու պրակտիկան կիրառվում է նաև յերբեմն կարտոֆիլի

ցանքից հետո, յերբ նրա վրա մուխոտերն են առաջացել: բայց դեռ կարտոֆիլի ծիլերը դուրս չեն յեկել: Պարդ ե, վոր փոցելի ատամները կարող են քլասել նաև կարտոֆիլի մասաղ ծիլերի վորոշ մասին, ուստի այս գործողութիւնը շատ զգուշ և մեծ խնամքով պիտի անել:

Միջօրեային մօակութիւնը. — Մյստեղ վճռական նշանակութիւնն ունի աշխատանքի ճիշտ կադմակերպումը: Միջարքային սշակութիւնը պիտի սկսել, յերբ մուխոտերն սկսում են մասսայականորեն յերևան գալ և բարձրորակ կուլտիվացիայով ու քաղհանով նրանց վոչնչացնել:

Այս առաջին քաղհանի կամ կուլտիվացիայի ուշացումը կարող է ճակատագրական նշանակութիւնն ունենալ բամբակի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի, բանջարանոցային և այլ շարքահերկ կուլտուրաների նորմալ զարգացման, հետևապես և նրանց բերքատուութիւնն բարձրացման վրա: Սակայն քաղհանի աշխատանքը չի սահմանափակվում միմիայն շարքահերկ կուլտուրաներով: Դա գրեթե հավասարապես անհրաժեշտ է գործադրել—(ի հարկե, այլ միջոցներով և յեզանակներով), նաև աշնանացան և դարնանացան հացահատիկների վերաբերմամբ վեգետացիայի հետադարձմանով, մանավանդ այդ դաշտերում մեծ չափով տարածված մի շարք ծալառնեղ վնասակար մուխոտերի դեմ (կանգառը և այլն): Սովորական ձևով կատարված ցանքսի դեպքում առայժմ հիմնական միջոցը ձեռքի անմիջական աշխատանքն է: Պետք է արմատով դուրս քաշել արդեն վորոշ բարձրութիւնն հասած մուխոտերը, իսկ այն դեպքում, յերբ դա հնարավոր չի, սխտեմատիկաբար կտրատել և հեռացնել նրանց վերերկրյա

կանաչ մասերը, վորպեսզի աստիճանաբար արմատական սխտեմը հարստահարվի իր մեջ կուտակված ահագին քանակությամբ հասնող որգանական նյութերից և վերջիվերջո դատապարտվի վոչնչացման: Մուլախոտերը շատ ավելի հեշտ և դուրս քաշել անձրեփներից հետո, յերբ հողամասի վրա կարելի չե առանց ցելստովելու շարժվել: Սակայն մի բան յերբեք մոտանալ չի կարելի, այդ այն է, վոր թե բազմամյա և թե միամյա մուլախոտերը պետք է վոչընչացնել մինչև նրանց ծաղկելը և սերմեր տալը: Հացահատիկների միջի մուլախոտերը վոչնչացնելու գործը, ահա արդեն 3-րդ տարին է, ինչ թե ԽՍՀՄ-յան այլ հանրապետություններում և թե մեզ մոտ՝ առաջավոր կուլտնտեսություններն առաջ. են տանում մեծազույն հողատարությամբ և մեծ արդյունքներ են ստացել վոչ միայն անցյալ յերեք տարիներում, այլ իրենց այդ ազնիվ և դիտակցական աշխատանքներով ստեղծել են բոլոր նախապայմանները առաջիկա տարիներում առավել ևս բարձր բերք ստանալու համար (անշուշտ, կիրառելով ազրոտելսնիկական բազմաթիվ այլ միջոցառումներ ևս): Սակայն միայն աշնանացանների ու գարնանացանների մեջ տարածված մուլախոտերի դեմ պայքարելով հարցը չի վերջանում: Անհրաժեշտ և հենց վաղ գարնանից սև ցելի վրա առաջ յեկած մուլախոտերը ևս վոչնչացնել՝ փոցխելու կամ կուլտիվացիայի միջոցով, վորը միաժամանակ հողի մակերեսի խորթուբորթություններն և հավասարեցնում, փխրեցնում և հողը, կանխում է ջրի անտեղի գոլորշիացումը:

Միաժամանակ շուտ պետք է հնձել միջնականների և առունների թմբերի վրա յեղած տարբեր մուլախոտերը,

վորոնք ծաղկում և սերմեր են ֆափում հողի մեջ տարբեր ժամանակներում: Ինչ վերաբերում է նաև մեր լեռնային շրջաններում դեռևս բավականաչափ տարածված հարոսին, վորն այդ շրջանների հողերը մոլախոտերով վարակելու գլխավոր աղբյուրն է հանդիսանում, մեր հիմնական անելիքն այն պետք է լինի, վոր առաջիկա տարիները մեր սոց. յերկրագործության դաշտավարության սխտեմից դուրս վանենք այդ հարոսը և նրա՝ թե քանակի և թե վորակի տեսակետից տված այնքան աննշան կերը փոխարինենք այդ շրջանների մեծ մասում բավականաչափ լավ զարգացող և անհամեմատ չափով շատ և բարձրորակ կերարժեք ունեցող վորոշ խոտաբույսերով (կորնզանը՝ չորային տեղերում, յերեջնուկը՝ համեմատաբար խոնավ շրջաններում):

5. ԳԱՐՆԱՆ ՑԵԼԵՐԻ ԴԵՐԸ

Գարնան վաղ ցել անելը և նրանց ամառային մշակումը մոլախոտերի դեմ պայքարելու վճռական միջոց է: Բացի սև ցելի դարձանային մշակությունից, ազրոտեխնիկական խոշոր նշանակություն ունեն նաև դարձանային ցելերը: Այդ ցելերը վոչ միայն զգալիորեն բարելավում են հողի ջրային ու աննշային պայմանները, այլ և հողամասի վրա տարածված բազմապիսի մոլախոտերն են մասսայական վոչնչացման լինութարկում և հետևապես ապահովում են առաջիկա աշնանացանների բարձր բերքատվությունը:

Գարնան ցելերը թե լեռնային և թե նախալեռնային շրջաններում պետք է կատարել հնարավորին չափ շուտ և նայած հողային ու այլ պայմաններին

այնպիսի խորութեամբ, զոր վոչ միայն նրա մեջ յի-
 դած խոնավութեանը պահպանվի գոլորշիացումից, այլ
 և խոնավութեան պաշարը վարելից հետո տեղացող ան-
 ճրեմիների ջրերի հաշվին ավելանաւ Գարնանը ճյառն հալ-
 վելուց հետո, հողամասի վրա սկզբում մեկ մեկ, իսկ
 քիչ ավելի հետո, ապրիլ-մայիս ամիսներին արդեն
 սկսում են զարգանալ բազմապիսի մուլխոտեր: Ուժեղ
 կերպով սկսում են զարգանալ նաև մեր կուլտուրական
 բույսերի ամենադաժան՝ բազմամյա մուլխոտերի բազ-
 մապիսի հին և նոր ներկայացուցիչները (չայիր, կան-
 դառ, պատատուկ, զանդուրդան և այլն), վորոնց ար-
 մատական սխտեմը բավականաչափ մեծ շառավիղով
 տարբեր ուղղութեաններով տարածվում և հողի մեջ և
 կազմում ամբողջական մի խիտ՝ արմատական ցանց:

Տվյալ դեպքում ժամանակին արած և բարձրորակ
 վաղ ցելը հենց հանդես և գալիս իբրև նժան վճռական
 մի միջոց, զորը վոչնչացնում և միամյա մուլխոտերին,
 բազմամյաների մի մասին ևլ յվոչնչացնում և ամբող-
 շապես, իսկ մյուս մասին մեծապես թուլացնում և Վա-
 րից անմիջապես հետո հողը պետք և փոցխել, հողի մա-
 կերեսը փոքրացնելու և արմատահան արված մուլ-
 խոտերը դուրս բերելու համար: Բացի այդ, 2—3 ան-
 գամ հողի մակերեսը փխրեցնելով և կարիք յեղած դեպ-
 քում թեթե շրջելով, վոչ միայն սխտեմատիկաբար թու-
 լացնում և աստիճանաբար վոչնչացնում ենք նրանց,
 այլ և նրանց սերմերը գցելով հողի վոչ խոր, սակայն
 համեմատաբար ավելի խոնավ շերտում, ստեղծում ենք
 նրանց ծլելու համար պայմաններ, վորպեսզի հաջորդ
 փխրեցման և աշնանացանին նախորդող կուլտիվա-
 ցիայի միջոցով մասսայականորեն վոչնչացնենք նրանց—

մինչև նրանց ծաղիկներ և սերմեր տալը: Բացի դրանից, յերեքից չորս անգամ հողի մակերեսը փխրեցնելով, կանխում ենք ջրի անտեղի գոլորշիացումը և դրանով խիստ պայմաններ ենք ստեղծում, վոր աշնանացանների սերմերը շուտ ծլին, հենց աշնանը և ուժեղ թփակալին: Իրա հետևանքով աշնանացանը հաջորդ պարնանն արագ դարձանալով՝ իր սովերի տակն և առնում մոլախոտերին ու նրանց պղպի մասին անխուսափելի մահվան դատապարտում: Իարնան ցելերից ջրի գոլորշիացումը կանխելու հարցը հատկապես մեծ նշանակություն ունի մեր մի շարք լեռնային ու նախալեռնային շրջաններում (Կոտայք, Թալին, Լենինական, Արթիկ և այլն), ուր հողերի մեծ մասն անջրդի յե և աշնան ցանքի ժամանակ հողերի վատ մշակության և ցելերի հիմնական վարն ու խնամքը անսխալ կատարելու պատճառով, հողի միջի խոնավությունն ամառվա ամիսներին ամբողջապես գոլորշիացած և լինում, բնական և այն, վոր նման հողերում, առանց բավականաչափ անձրևի, աշնանացանը չի ծլում:

Խոզանահերկով պոլյարեմի մոլոխոսերի դեմ

Աղբոտելանիկական այս կարևորագույն ձեռնարկման, երբ թյունը կայանում և նրանում, վոր հացահատիկների հնձից հետո անմիջապես, առանց որ կորցնելու, խողանը վարվի 8—10 սմ. խորությամբ: Այս դեպքում, հողի մեջ տեղի ունեցող մի շարք պրոցեսների հետևանքով, աշնան խոր վարի վորակը բարձր և ինտում:

Այնինչ, այս կարևոր մոմենտը վոչ միայն վորոշ կոլխոզնիկների, այլ անգամ աղբոտմների և աղմինիս-

արատիւլ դժով աշխատողների մի մասի կողմից մինչև որս
արհամարհւած և յեղել, ըստ վորում Նման մտեցումն
աշխատել են հիմնավորել, մասնանշելով, վոր խողա-
նահերկը աշխատանքը կրկնապատկում է, եներդիայի
լրացուցիչ ծախսման պատճառ դառնում, և վոր իբր թե
նման ոպերացիան առանձին ենթեկտ չի տալիս: Նման
մտեցումը միանդամայն սխալ և և բղխում և այդ ձեռ-
նարկման ադրուտեխնիկական խոշոր նշանակությունը
չըմբռնելուց:

Հացահատիկների հնձի ժամանակ հողամասը պրե-
թե դրկված և լինում իր ամբողջ խոնավությունից:
Խոնավությունից խիստ ազքատացած հողամասը նաև
պնդացած ու ճաքճքած և լինում: Առաջ են գալիս ու-
ժեղ չափով արտահայտված կատիլյար անցքեր, վորոնց
միջոցով հողի ցածր շերտերի խոնավությունը, բարձրա-
նալով վերև, գոլորշիանում է:

Մինչև աշնանացան և գարնանացան հացահատիկ-
ների հունձը, մոլախոտերի մեծագույն մասը հասնում,
սերմեր և տալիս և թափում և դրանց հողի մեջ: Նման
մոլախոտերը հնձի ժամանակ իրենք ել կտրվում են
հացահատիկների հետ միասին: Ինչ վերաբերում և
կարճ և ստվերի տակ դռնվող մոլախոտերին, ապա
նրանք, շնորհիվ իրենց թղուկության, վրիպում են
հնձող գործիքների բանվորական մասի հարվածներից,
մնում են անվնաս և հնձելուց հետո՝ չազատ լինելով հա-
ցահատիկների խիտ ստվերից, արագությամբ սկսում
են դարգանալ, վերցնում են հողի մեջ մնացած սնունդը
և խոնավությունը, կուտակում են մեծ քանակությամբ
որգանական նյութեր և արդեն կարճ ժամանակից հետո
պատրաստվում են մեծ քանակությամբ սերմեր տալու

կամ թե իրենց արմատական ցանցն ավելի ընդարձակելու (բազմամյաները) և այսպիսով ել ավելի վարակելու հողամասը մոլախոտերով: Բնական ե, վոր միամյա և բազմամյա մոլախոտերով այդպես վարակված, խոնավությունից զրկված և ճաքճաքած հողամասերի հետագա խոր վարի համար կալահանջվի քաշող ահագին ուժ, այսինքն հներգիայի բավականաչափ լրացուցիչ ծախս և բացի դրանից, կկատարվի ցածրորակ վար, և յեթե այդպիսի հողամասի վրա աշնանացան արվի, ապա սերմերի զգալի մասը, ընկնելով մեծ կոշտերի յերեսին կամ նրանց շրջակայքում գտնվող մեծ ու փոքր խոռոչների մեջ և շրջապատված լինելով հողի չոր ու մեծ մասնիկներով, կամ չի ծլի կամ կծլի ուշ և ձմեռը կցրտահարվի:

Սակայն բոլորովին այլ և դրությունը, յերբ հընձից անմիջապես հետո 8—10 սմ. խորությամբ բազմախոփ գութաններով խոզանահերկ ենք կատարում: Այս դեպքում հողի ամհնից շատ չորացած, պնդացած և ճաքճքած վերևի շերտը թեթև շուռ ենք տալիս, վոչնչացնում ենք հնձի ժամանակ չկտրատված միամյա մոլախոտերը, ինչպես նաև կտրվածների արմատները: Միաժամանակ հողի չոր մակերեսին ընկած բյուրավոր մոլախոտերի սերմերը շուռ ենք տալիս և հողի տակն անում, խախտում ենք հողի կապիւյթը անընդհատ սխտեմը, հողի մակերեսը ծածկում համեմատաբար փութը շերտով, վորի շնորհիվ կանխվում և հողի ցածի շերտերից վերև բարձրացող խոնավության գոլորշիացումը: Այդ բոլորի հետևանքով փափկում, փխրանում և հողը, նրա մեջ սկսում են արագորեն ընթանալ հողի հասունացման պրոցեսները, իսկ մյուս կողմից ել թեթև շեր-

տի տակն ընկած վորոշ մոլախոտերի հին և նոր սերմերն սկսում են ծլել և հենց այն ժամանակ, յերբ նրանք մասսայականորեն դուրս են դալիս հողի յերես և դարդանալ են սկսում, վորը տեղի յե ունենում մոտավորապես 1—1,5 ամիս դրանից հետո (նայած շրջանին և այլ պայմաններին), մենք լրիվ խորուխթյամբ աշնանավար ենք անում: Ահա այդ ժամանակ բոլոր նոր ծլելերը վոչնչանում են, իսկ բազմամյա մոլախոտերի արմատները շրջվելով հողի յերեսը, վրա հասնող ձմեռվա սառնամանիքներից ցրտահարուխթյան են յինթարկվում: Նույնը տեղի յե ունենում նաև աշնանավարից հետո ծլած միամյա մոլախոտերի մատղայ ծիլերի նկատմամբ:

Ձպետք է մոռանալ նաև այն, վոր խոզանավարի ժամանակ վոչնչանում են շատ քնասատուներ, վորոնք դուրս դալով հողի յերես, մեռնում են արևի կիզիչ ճառագայթների տակ, կամ թռչուններին համեղ սնունդ դառնում:

Մենք կանգ չառանք մոլախոտերի դեմ պայքարելու մի շարք այլ ազդրոտեխնիկական ձեռնարկումների կամ վերջիններիս կոմպլեքսի (ցանքաշրջանառուխթյան, քիմիական միջոցների և այլն) վրա, սակայն վերևի ասածից արդեն պարզ է դառնում, վոր նրանց դեմ տարվող պայքարը չի սահմանափակվում միայն առանձին կոլխոզներով կամ առանձին հողամասերով, վոչ: Մոլախոտերի դեմ պայքարելը դա ընդհանուր յերկրագործական հարց է: Իրանց վոչնչացնելու համար՝ նայած բազմազան պայմաններին, պետք է գործադրել համապատասխան ազդրոտեխնիկական պահանջներ:

Սակայն յեթե ներկա դեպքում մենք կանգ առանք


զլիազորուսպես զարնան և ամբան սկզբնական շրջանում
 մուլախոտերի դեմ տարվելիք պայքարի մի շարք հիմ-
 նական միջոցների վրա, ապա դա նրա համար, վոր թե
 աշնանային, թե գարնանային միամյա մուլախոտերը և
 թե բազմամյա մուլախոտերը մասսայականորեն դարգա-
 նալ են սկսում ամենից շատ հենց այդ շրջանում, և
 վոր ահա, մեծ մասամբ այդ շրջանում նրանց դնմ կազ-
 մակերսված ադրոտեխնիկական հաջող պայքարից և
 կախված վոչ միայն գարնան սկզբնական շրջանում
 կուլտուրական բույսերի նորմալ զարգացումը, այլ և
 դրանով իսկ ղգալի չափով կանխորոշվում և գարնան
 վերջերին և ամռան ամիսներին նրանց դեմ տարվող
 պայքարի հաջողութունը, հետևապես և կուլտուրական
 բույսերի բարձր բերքատվութունը:



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

62

Անխնա պայքարելով մուխոտների դեմ, բարձրացնենք սոցիալիստական դաշտերի բեր- քատվույթյունը	3
1. Սերմադառումը	7
2. Պայքարել մուխոտների դեմ մինչև դար- նանացանը	8
3. Շանքի ժամանակի վճռական նշանա- կույթյունը	10
4. Գարնանը մուխոտների դեմ պայքարելը հետցանքյա շրջանում	12
5. Գարնան ցեղերի դերը	16





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038301

(054)
9162 30 4.

А $\frac{1}{4056}$



А. ГЮДАНЯН

Как бороться против сорняков весной
и в начале лета

СЕЛЬХОЗГИЗ

1984

ЭРИВАНЬ